

Փաստ. անվանումը	ԵՄՀ Ուսանողական խորհրդի կանոնադրություն
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-19-01
Հաստատման ամսաթիվը	2/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Հաստատող	Սուրեն Օհանյան/Նախագահ



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈւՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ

- Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԵՄՀ ՈւԽ) ԵՄՀ ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է:
- ԵՄՀ ՈւԽ-ն ապաքաղաքական, ապակուսակցական և ներհամալսարանական կազմակերպություն է:
- ԵՄՀ ՈւԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
- ԵՄՀ ՈւԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԵՄՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
- ԵՄՀ ՈւԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий Совет Международного Института Евразия, անգլերեն՝ Student Council of Eurasia International University:
- ԵՄՀ ՈւԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0014, Ազատության 24/2, Եվրասիա միջազգային համալսարան:

2. ՈւԽ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈւՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՄՀ ՈւԽ-ի նպատակն է՝

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- աջակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,
- միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը,
- կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ԵՄՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,
-

- ինչպես նաև զբաղվել ուսանողներին հուզող այն խնդիրներով, որոնք նախատեսված չեն սույն կանոնադրությամբ:
- ԵՄՀ ՈւԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից: Այն համագործակցում է ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:
- ՈւԽ-ն համալսարանի կանոնադրության շրջանակում, սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն, սոցիոլոգիական և այլ կարգի հետազոտություններ, իրականացնել խորհրդատվություն:

3. ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- ԵՄՀ ՈւԽ նախագահի, ֆակուլտետի ավագների և կուրսերի ավագների ընտրությունները կազմակերպում է ԵՄՀ ՈւԽ ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ընտրական հանձնաժողով):
- Ընտրական հանձնաժողովը բաղկացած է թվով 7 հոգուց, որոնցից 1-ը ԵՄՀ գիտական խորհրդի, 5-ը՝ ԵՄՀ ՈւԽ նախագահության և 1-ը՝ ԵՄՀ ռեկտորատի կողմից:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրվում են հանձնաժողովի կազմից՝ ընտրական հանձնաժողովի առաջին նիստում:

Ընտրական հանձնաժողովը՝

- հաստատում է իր գործունեության աշխատակարգը և ընտրությունների կազմակերպման ընթացակարգը,
- կազմում է ընտրությունների ժամանակացույցը,
- անցկացնում, ամփոփում և հաստատում է ընտրությունների արդյունքները,
- եռօրյա ժամկետում քննարկում է ընտրությունների կապակցությամբ ներկայացված բողոքները, ընտրությունների ելքի վրա ազդած կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին,
- ԵՄՀ ՈւԽ նախագահի, ֆակուլտետների ավագների և կուրսերի ավագների ընտրություններից հետո հրավիրում և կազմակերպում է ԵՄՀ ՈւԽ նոր գումարման անդրանիկ Ընդհանուր խորհուրդ,
- կանոնակարգում է սույն կանոնադրությամբ ՈւԽ ընտրություններին վերաբերող չկանոնակարգված հարցերը:
- Ընտրական հանձնաժողովի անդամները չեն կարող ընտրվել ԵՄՀ ՈւԽ նախագահ, ֆակուլտետի կամ կուրսի ավագ:
- Ընտրական հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:
- Ընտրությունների կարգը սահմանված է Հավելված 1-ում:

4. ՈւՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

- ԵՄՀ ՈւՄ բարձրագույն մարմինը ՈւՄ-ի Ընդհանուր խորհուրդն է: ՈւՄ-ի Ընդհանուր խորհուրդը լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում են ՈւՄ նախագահը, ֆակուլտետների և կուրսերի ավագները, ԵՄՀ Ուսանողական գիտական խորհրդի ներկայացուցիչները և ԵՄՀ վարժարանի նախագահը:
- ՈւՄ-ի Ընդհանուր խորհրդի կազմը համալրվում է յուրաքանչյուր տարին մեկ անգամ:
- Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողները:
- ՈւՄ Ընդհանուր խորհրդի անդամ կարող են դառնալ այն ուսանողները, որոնց վերջին երկու կիսամյակի միջին գնահատականը 3 և ավելի (20 միավորանոց գնահատման համակարգով 13 և ավելի) միավոր է, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում է միայն մեկ կիսամյակի արդյունքները:
- ՈւՄ Ընդհանուր խորհուրդը հրավիրվում է տարին երկու անգամ՝ ՈւՄ նախագահության կողմից: Անհրաժեշտության դեպքում ՈւՄ նախագահությունը կարող է հրավիրել արտահերթ Ընդհանուր խորհուրդ: Արտահերթ Ընդհանուր խորհուրդ կարող է գումարվել նաև Ընդհանուր խորհրդի պատվիրակների 1/2-ի պահանջով:

Ընդհանուր խորհուրդ՝

- ընդունում է ՈւՄ-ի կանոնադրությունը, փոփոխություններ և լրացումներ կատարում նրանում,
- լսում և հաստատում է ՈւՄ նախագահի տարեկան հաշվետվությունը,
- քննարկում և սահմանում է ՈւՄ-ի տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնայնությունները,
- որոշում է կայացնում ՈւՄ-ի վերակազմավորման վերաբերյալ,
- Ընդհանուր խորհուրդն իրավագոր է, եթե ներկա են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Սույն կետի 4.6.1. և 4.6.4. ենթակետերով սահմանված հարցերը քննարկելիս որոշումներն ընդունվում են Ընդհանուր խորհրդի անդամների ներկաների 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում, իսկ մյուս հարցերը՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

5. ՈւՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

- Ընդհանուր խորհրդի միջև ընկած ժամանակաշրջանում ՈւՄ աշխատանքները ղեկավարում է ԵՄՀ ՈւՄ նախագահությունը:
- Ընդհանուր խորհրդի անդամները համարվում են նաև ՈւՄ նախագահության անդամներ:
- ՈւՄ նախագահությունը ղեկավարում է ՈւՄ նախագահը, որն ընտրվում է ԵՄՀ ուսանողության կողմից: ՈւՄ-ի ընտրությունների ժամանակ անցկացվում է նաև ֆակուլտետների ավագների ընտրություններ:
- ՈւՄ նախագահ կարող է դառնալ այն ուսանողը, որի վերջին երկու կիսամյակի միջին գնահատականը 3 և ավելի (100 միավորանոց գնահատման համակարգով 63 և ավելի) միավոր է, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում է միայն մեկ կիսամյակի արդյունքները: Նախագահի թեկնածուն պետք է երաշխավորված լինի երեք ուսանողի կողմից: ՈւՄ նախագահ չի

կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանն անդամակցող թեկնածու:

- ՈւՄ նախագահի ընտրությունը կատարվում է ուղղակի, գաղտնի քվեարկությամբ: Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողները:
- ՈւՄ նախագահն ընտրվում է հարաբերական մեծամասնական ընտրակարգով: Ընտրությունների արդյունքում հավասար ձայներ հավաքած երկու թեկնածուների առկայության դեպքում կազմակերպվում է նոր ընտրություններ:
- ԵՄՀ ՈւՄ նախագահը, ով հանդիսանում է նաև ԵՄՀ ՈւՄ նախագահության նախագահ, ներկայացնում է ՈւՄ-ն ԵՄՀ Գիտական խորհրդում, ռեկտորատում և համալսարանական այլ օղակներում: Նա ներկայացնում է ԵՄՀ ՈւՄ-ն և ուսանողությանը ՀՀ և արտերկրի բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, մասնավոր անձանց և ընկերությունների շրջանում:
- ՈւՄ նախագահը ընտրվում է մեկ տարի ժամկետով: Սահմանված ժամկետը լրանալու կամ ԵՄՀ-ում ուսումն ավարտելու դեպքում, բացառությամբ ուսումը մագիստրատուրայում շարունակելու դեպքից, ԵՄՀ ՈւՄ նախագահը վայր է դնում իր լիազորությունները: Այդ դեպքում հայտարարվում են ՈւՄ նախագահի նոր ընտրություններ:
- Կանոնադրության 5.4. կետի պահանջներին ենթարկվում են ֆակուլտետների ավագների թեկնածուները: Ֆակուլտետների ավագների ընտրություններն անցկացվում են ՈւՄ նախագահի ընտրությունների հետ միաժամանակ նույն ընթացակարգով:

ՈւՄ նախագահությունը`

- միջոցներ է ձեռնարկում ՈւՄ Ընդհանուր խորհրդի որոշումներն իրականացնելու համար,
- հաստատում է ՈւՄ նախագահության, քարտուղարության, հանձնաժողովների աշխատակարգերը,
- վավերացնում է ՈւՄ նախագահի կողմից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը,
- հանձնաժողովներում և ֆակուլտետներում կատարվող աշխատանքների մասին լսում է զեկույցներ,
- կարող է անվստահություն հայտնել ՈւՄ նախագահին, նախագահության անդամներին,
- կարող է լսել և լուծել ՈւՄ իրավասությանը վերաբերող ցանկացած հարց, բացառությամբ Ընդհանուր խորհրդի իրավասությանը վերապահվածներից:

Ուսանողական խորհրդի նախագահությունում գործում են`

- իրավական հանձնաժողով,
- արտաքին կապերի հանձնաժողով,
- լրատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողով,
- գիտակրթական հանձնաժողով,
- ֆինանսատնտեսական հանձնաժողով,
- մշակույթի, սոցիալական և սպորտի հանձնաժողով:

Անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

- ԵՄՀ ՈւՄ նախագահությունը նիստեր է գումարում ամիսն առնվազն մեկ անգամ:

- ԵՄՀ ՈւԽ նախագահության նիստը իրավագոր է, եթե ներկա են անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Սույն կանոնադրության 5.10. կետի 5.10.6. ենթակետով հարցերի քննարկման ժամանակ ՈւԽ նախագահության որոշումներն ընդունվում են նախագահության անդամների 2/3-ի կողմ քվեարկելու արդյունքում, եթե անդամների ընդհանուր թվի 2/3-ը պաշտպանում է անվստահության քվեն, ապա համապատասխան անձը վայր է դնում իր լիազորությունները: Անվստահության հարցի բարձրացումը կարգավորվում է ԵՄՀ ՈւԽ աշխատակարգով:
- ԵՄՀ ՈւԽ նախագահի որոշմամբ կամ նախագահության անդամների 1/2-ի պահանջով կարող է հրավիրել ԵՄՀ ՈւԽ նախագահության արտահերթ նիստ:

6. ԵՄՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ԵՄՀ ՈւԽ անդամների աշխատանքային պարտականությունները սահմանված են Հավելված 2-ում:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- Ուսանողական խորհրդի ֆինանսական միջոցները գոյանում են ԵՄՀ հատկացումներից, դրամաշնորհներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ԵՄՀ Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից (հետազոտություններ, վճարովի զանազան ծառայություններ):

8. ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է ՈւԽ-ի որոշումների կանոնակարգային համապատասխանության և ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:
- Հանձնաժողովի կազմը (ընդհանուր թվով երեք հոգի) ընտրվում է ՈւԽ Ընդհանուր խորհրդի կողմից՝ մեկ տարի ժամկետով՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ, որը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ԵՄՀ ՈւԽ նախագահության նիստերին:
- Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է Ընդհանուր խորհրդին:

9. ՈՒԽ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

- ԵՄՀ ՈւԽ-ն վերակազմավորվում է ԵՄՀ ՈւԽ Ընդհանուր խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՎՐԱՄԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈւՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՐՍԵՐԻ ԱՎԱԳՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհրդի (այսուհետ՝ ԵՄՀ ՈւԽ) կանոնադրությանը համապատասխան՝ ԵՄՀ ՈւԽ նախագահի, ֆակուլտետների և կուրսերի ավագների ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:
- ԵՄՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողները, անկախ սովորելու ձևից, ընտրություններին մասնակցում են անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ, կամավոր հիմունքներով:
- ԵՄՀ-ն խթանում է, որպեսզի ԵՄՀ ՈւԽ Նախագահի, Ֆակուլտետների և Կուրսերի ավագների ընտրություններն անցկացվեն մրցակցության և այլընտրանքի սկզբունքներով:
- ԵՄՀ ՈւԽ-ի կանոնադրությանը համապատասխան ստեղծված ՈւԽ ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում պատասխանատվություն է կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար:
- ԵՄՀ-ում ընտրություններն անցկացվում են միայն ԵՄՀ տարածքում:
- Քվեարկության օրն ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում, տեղամասային կենտրոնում իրավունք ունեն ներկա գտնվել թեկնածուների վստահված անձինք, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

2. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

- ԵՄՀ-ում ընտրողների ցուցակները կազմում և վարում է Ուսումնական մասը:
- Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ կուրսի կամ ֆակուլտետի ընտրողների ցուցակներում և միայն մեկ անգամ:
- ԵՄՀ ՈւԽ նախագահի ընտրությունների ընտրացուցակներում ընդգրկվում են ԵՄՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողները: Ֆակուլտետի ավագի և կուրսի ավագի ընտրությունների ընտրացուցակներում ընդգրկվում են համապատասխան կուրսի և ֆակուլտետի ուսանողները:
- ԵՄՀ Ուսումնական մասը քվեարկության օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրում է ընտրողների ցուցակների մեկական օրինակ՝ ըստ կուրսերի՝ ԵՄՀ ՈւԽ հատկացված համապատասխան մասում փակցնելու համար:
- ԵՄՀ Ուսումնական մասի ղեկավարն ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ կուրսերի և ֆակուլտետների՝ տպագրված մեկ օրինակից (կազմված մատյանի ձևով) քվեարկության օրվանից մեկ օր առաջ տրամադրում է ընտրական հանձնաժողովի նախագահին:

- ԵՄՀ ընտրողների և ընտրողների ստորագրած ցուցակներն ազատ են ծանոթության համար:

3. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱԳՄԱԿԵՐԱԿԱՆ և ԱՆԳԿԱԳՄԱՆ ՆԱԿԱՏԱԿՈՎ ԵՄՀ ՍԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԳՄԱՎՈՐՎՈՒՄ Է ՄԵԿ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ:

- Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով ԵՄՀ տարածքում կազմավորվում է մեկ ընտրատարածք:

4. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

- Ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու համար (ներառյալ՝ ընտրողների ցուցակները կազմելը) ծախսերը, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են ԵՄՀ հատկացումներից, ԵՄՀ ՈւԽ ֆոնդից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5. ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ

- ԵՄՀ ՈւԽ նախագահի, ֆակուլտետների և կուրսերի ավագների թեկնածուներն իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ մեկ վստահված անձ: Վստահված անձը պետք է լինի ԵՄՀ ուսանող: Քվեարկության օրը վստահված անձն ազատվում է դասերից:
- Համապատասխան թեկնածուի վստահված անձը քվեարկության օրվանից երկու օր առաջ պետք է ներկայացվի ընտրական հանձնաժողովին գրանցվելու և կնիքով վավերացված վկայականներ ստանալու համար:
- Վստահված անձն իրավունք ունի՝
- խորհրդակցական ձայնի իրավունքով քվեարկության օրը մասնակցելու ընտրական հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում,
- ծանոթանալու ընտրական փաստաթղթերին,
- բողոքելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները, անգործությունները,
- ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին,
- չմիջամտելու ընտրական հանձնաժողովի անդամի աշխատանքներին՝ ֆիզիկապես ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեաթերթիկ հատկացնող անդամների, քվեաթերթիկը կնքող և քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին,
- քվեարկության արդյունքներն ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկների հաշվարկմանը, դրանցում կատարված նշումներին և քվեարկության ամփոփմանը:

6. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով ԵՄՀ-ում կազմավորվում է Ընտրական հանձնաժողով:
- Ընտրական հանձնաժողովն ապահովում է ուսանողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:
- Ընտրական հանձնաժողովը բաղկացած է թվով 7 հոգուց, որոնցից 1-ը ԵՄՀ գիտական խորհրդի, 5-ը՝ ԵՄՀ ՈւԽ նախագահության և 1-ը՝ ԵՄՀ ռեկտորատի կողմից:
- Ընտրական հանձնաժողովի անդամը քվեարկության օրն ազատվում է դասերից:
- **Ընտրական հանձնաժողովը՝**
 - հաստատում է իր գործունեության աշխատակարգը և ընտրությունների կազմակերպման ընթացակարգը,
 - կազմում է ընտրությունների ժամանակացույցը,
 - սահմանում է քվեաթերթիկների և ընտրական այլ փաստաթղթերի ձևերը, դրանց լրացման և պահպանման կարգը,
 - անցկացնում, ամփոփում և հաստատում է ընտրությունների արդյունքները,
 - հաստատում է քվեատուփի ձևը,
 - հսկողություն է իրականացնում սույն ընթացակարգի միատեսակ կիսուման նկատմամբ,
 - գրանցում և վկայականներ է տալիս ԵՄՀ ՈւԽ նախագահի, ֆակուլտետների և կուրսերի ավագների թեկնածուներին, վստահված անձանց,
 - եռօրյա ժամկետում քննարկում է ընտրությունների կապակցությամբ ներկայացված բողոքները, ընտրությունների ելքի վրա ազդած կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին,
 - ԵՄՀ ՈւԽ նախագահի, ֆակուլտետների և կուրսերի ավագների ընտրություններից հետո հրավիրում և կազմակերպում է ԵՄՀ ՈւԽ նոր գումարման անդրանիկ Ընդհանուր խորհուրդ,
 - իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

7. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- Քվեարկությունն անցկացվում է ընտրական տեղամասում, ժամը 9:00-ից մինչև 15:30-ը: Ժամը 15:30-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց չքվեարկած ընտրողները քվեարկելու իրավունք ունեն:
- Քվեարկությունը կատարվում է այդ նպատակով կահավորված սենյակում: Քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորին չափ ընդարձակ և բավարարի հետևյալ պահանջները՝
- հնարավորություն ընձեռվի քվեարկության ողջ ընթացքում ապահովել ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների և քվեարկության ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքը,
- ընտրական հանձնաժողովի բոլոր անդամներին և վստահված անձանց հնարավորություն ընձեռի իրենց տեսադաշտում պահել քվեարկության

խցիկները, քվեատուփը, ինչպես նաև քվեարկության խցիկների մուտքն ու ելքը, դրանցից մինչ քվեատուփն ընկած հատվածը:

- Քվեարկության խցիկը պետք է լինի այնպես, որ ուսանողը կարողանա ընտրատարածքում ներկա գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը: Քվեարկության խցիկում պետք է տեղադրվի սեղան, վրան՝ գրիչ, այն պետք է լինի բավարար լուսավորված:
- Քվեաթերթիկի ձևը և շարադրանքը սահմանում է ընտրական հանձնաժողովը: Քվեաթերթիկը պետք է լինի տպագրված, պարունակի քվեաթերթիկի լրացման կարգի մասին ծանուցում: Քվեաթերթիկը պետք է պատրաստած լինի անթափանց թղթից: Քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը, իսկ հատման գծից ներքև՝ ձախ կողմում, այբբենական հերթականությամբ նշվում են թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, իսկ աջ կողմում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյուններ: Մեկ թեկնածու քվեարկելու դեպքում քվեաթերթիկում թեկնածուի ազգանուն, անուն, հայրանուն տողի ներքևում գրվում է «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունում: Քվեաթերթիկը թողարկվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան երկու օր առաջ:

8. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

- Քվեարկության նախորդ օրն ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի երեք անդամներին, ովքեր պարտավոր են մինչև ժամը 17:00-ը ստորագրել բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը (ստորագրությունները դրվում են քվեաթերթիկների և ընտրողների ցուցակների յուրաքանչյուր էջի հակառակ կողմում): Ստորագրված քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները, կնիքի փաթեթը պահվում են հատուկ չհրկիզվող պահարանում:
- Քվեարկության օրը, ժամը 8:30-ին ընտրական հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրվում է ընտրողների գրանցում իրականացնող անդամին:
- Քվեարկությանը ներկայացված յուրաքանչյուր ընտրող գրանցվում է հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ցուցակում: Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամը ստուգում է ուսանողական տոմսը կամ ուսումնական մասի կողմից ստացած մասնակցության թերթիկը, ընտրողների ցուցակում գտնում է նրա ազգանունը, անունը, հայրանունը, հերթական համարը, լրացնում է ուսանողական տոմսի կամ մասնակցության թերթիկի տվյալները, և ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց:
- Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր ուսանող ստանում է քվեարկության մեկ քվեաթերթիկ (քվեաթերթիկներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացնելու դեպքում): Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին: Վերջինս անջատում է քվեաթերթիկի

(քվեաթերթիկների՝ միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացվելու դեպքում) ելունդը, քվեաթերթիկի ներքևի հատվածը կնիքով վավերացնում և հանձնում է ընտրողին: Ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

- Քվեաթերթիկում ընտրողն ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմաց, ում կողմ է քվեարկում: Միայն լրացնելու դեպքում ընտրողը քվեաթերթիկը հանձնում է հանձնաժողովի նախագահին և ստանում նոր քվեաթերթիկ: Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը քվեարկության խցիկում քվեաթերթիկը ծալում և մոտենում է քվեատուփին: Քվեատուփի մեջ քվեարկության թերթիկը գցելուց հետո ընտրողը դուրս է գալիս ընտրական տեղամասից: Միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացնելու դեպքում ընտրողը յուրաքանչյուր քվեաթերթիկ գցում է համապատասխան քվեատուփը մեկ առ մեկ:
- Քվեարկության սենյակում չի կարող միաժամանակ երեք հոգուց ավել քվեարկող գտնվել:
- Քվեաթերթիկը սահմանվում է անվավեր, եթե՝
 - ստորագրված չէ,
 - մեկից ավելի թեկնածուների օգտին նշումներ է պարունակում,
 - մեկ թեկնածու քվեարկելու դեպքում միաժամանակ և՛ «կողմ եմ», և՛ «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է պարունակում,
 - չի պարունակում որևէ նշում,
 - պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում,
 - չսահմանված նմուշի քվեաթերթիկ է:

9. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՍ

- Ընտրական հանձնաժողովն ընտրություններից հետո՝
 - հաշվում է չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված քվեաթերթիկների ընդհանուր թիվը, ապա ընտրական հանձնաժողովի սահմանված կարգով մարում է քվեաթերթիկները, փաթեթավորում և կնքում է փաթեթը,
 - հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է քվեաթերթիկները, տեսակավորում է և հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը: Հաշվարկված թվերը արձանագրվում և հրապարակվում են:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտոնը՝ ՈւՄ նախագահ

Պարտականությունները՝

- հաստատում է ՈւՄ տարեկան աշխատանքային պլանը,
- մասնակցում է ՈւՄ ամենամսյա նիստերին,
- մասնակցում է ԵՄՀ ռեկտորատի նիստերին,
- կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,
- ներկայացնում է համալսարանն արտահամալսարանական միջոցառումների ժամանակ,
- լսում է զեկույցներ հանձնաժողովներում և ֆակուլտետներում կատարվող աշխատանքների մասին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ԵՄՀ ռեկտորատին:

Պաշտոնը՝ ՈւՄ քարտուղար

Պարտականությունները՝

- հավաքագրում է ՈւՄ անդամների տվյալները և անհրաժեշտության դեպքում կապ հաստատում անդամների հետ,
- կազմակերպում և մասնակցում է ՈւՄ ամենամսյա նիստերին,
- կազմում է արձանագրություններ ՈւՄ նիստերի ժամանակ,
- վերահսկում է ՈւՄ արխիվը,
- անհրաժեշտության դեպքում ՈւՄ նախագահի հանձնարարությամբ ներկայացնում է համալսարանն արտահամալսարանական միջոցառումների ժամանակ,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւՄ նախագահությանը:

Պաշտոնը՝ ֆակուլտետի ավագ

Պարտականությունները՝

- հետևում է տվյալ ֆակուլտետի կարգ ու կանոնին,
- կազմում է աշխատանքային պլան՝ ՈւՄ կանոնադրության համաձայն,
- մասնակցում է ՈւՄ ամենամսյա նիստերին,
- ֆակուլտետի շրջանակներում կազմակերպում և անցկացնում է տարբեր բնույթի միջոցառումներ,
- անհրաժեշտության դեպքում ՈւՄ նախագահի հանձնարարությամբ ներկայացնում է համալսարանը արտահամալսարանային միջոցառումների ժամանակ,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւՄ նախագահությանը:

Պաշտոնը՝ կուրսի ավագ

Պարտականությունները՝

- կանոնակարգում է տվյալ կուրսի աշխատանքները,
- հետևում է հաճախումներին և լրացնում դասամատյանը, կատարում դասամատյանով նախատեսված պահանջները,

հանդես է գալիս իր խմբի շահերի պաշտպանությամբ,

- մշտապես տեղյակ է պահում իր կուրսի ուսանողներին կազմակերպվող միջոցառումների մասին և ապահովում նրանց ներկայությունն այդ միջոցառումներին,
- կուրսի շրջանակներում կազմակերպում և անցկացնում է տարբեր բնույթի միջոցառումներ,
- կատարում է ՈւԽ նախագահի և տվյալ ֆակուլտետի ավագի կողմից հանձնարարված աշխատանքները,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ իրավական հանձնաժողովի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- հետևում է ՈւԽ-ի բոլոր իրավական փաստաթղթերի ճիշտ ձևակերպմանը,
- կազմակերպում և անցկացնում է ՈւԽ ընտրությունները,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ արտաքին կապերի հանձնաժողովի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- ՈւԽ նախագահի հետ միասին կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,
- մասնակցում կամ անհրաժեշտության դեպքում ապահովում է ուսանողների ներկայությունն արտահամալսարանական միջոցառումներին,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ լրատվության և հասարակայնության հանձնաժողովի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- համագործակցում է գիտակրթական հանձնաժողովի հետ՝ համալսարանական ամսաթերթի տպագրման գործում,
- լուսաբանում է համալսարանական և արտահամալսարանական բոլոր միջոցառումները,
- վերահսկում է համալսարանի էլեկտրոնային կայքի ՈւԽ-ի էջը,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ գիտակրթական հանձնաժողովի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- համագործակցում է լրատվության և հասարակայնության հանձնաժողովի հետ՝ համալսարանական ամսաթերթի տպագրման գործում,
- մասնակցում է ՈւԽ ամենամսյա նիստերին,

- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ ֆինանսատնտեսական հանձնաժողովի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- կազմում է ՈւԽ տարեկան բյուջեն,
- հետևում է ֆինանսական ծախսերին,
- մասնակցում է ՈւԽ ամենամյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ մշակույթի, սոցիալական և սպորտի հանձնաժողովի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- կազմակերպում է տարբեր բնույթի միջոցառումներ,
- մասնակցում է ՈւԽ ամենամյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը:

Պաշտոնը՝ կազմակերպչական հարցերի պատասխանատու

Պարտականությունները՝

- կանոնակարգում է հանձնաժողովի ներքին աշխատանքները,
- կանոնակարգում է միջոցառումների կազմակերպչական աշխատանքները և հետևում կարգ ու կանոնին միջոցառումների ընթացքում,
- մասնակցում է ՈւԽ ամենամյա նիստերին,
- յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվությամբ ներկայանում է ՈւԽ նախագահությանը: